



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՀՀ ԲՆԱԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐ

*[Signature]* Ա. ՄԻՆԱՅԱՆ

« 26 » 09 2017թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 79

**Ձեռնարկողը՝**

**<<ՄԼ Մայնինգ>> ՍՊԸ**

Ք. Երևան, Շիրակի փ. Արտադրամաս 74/16

**Գործունեությունը՝**

**Եղվարդի հրաբխային խարամի արևմտյան  
տեղամասում 2017-2019թթ. ընթացքում կատարվելիք  
երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների  
շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ**

**<< Կոթայքի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈՒՄԻ  
տնօրեն՝**



**Վ. Սահակյան**

Առդիր եզրակացությունը՝ *[Signature]* թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 79

<<06>> 09 2017թ.

**Եղվարդի հրաբխային խարամի արևմտյան տեղամասի տարածքում 2017-2019թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	<<ՄԼ Մայնինգ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	<<Գ>>
Գտնվելու վայրը՝	<< Կոտայքի մարզ

Ձեռագրող 09 (10) 2017


Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Արևմտյան տեղամասը վարչական տեսակետից գտնվում է << Կոտայքի մարզի Եղվարդի ենթաշրջանում և տեղակայված է Եղվարդ քաղաքից շուրջ 6.5կմ հյուսիս-արևմուտք, Նոր Երզնկա գյուղից մոտ 6.5կմ հարավ-արևելք:

Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Արևմտյան տեղամասի կլիման արտահայտված ցամաքային է՝ շատ շոգ, չոր ամառ, չափավոր ցուրտ, անհողմ ձնառատ ձմեռ:

Արևմտյան տեղամասը իր երկրաբանական կառուցվածքի առանձնահատկություններով նման է Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Հարավ-արևելյան տեղամասին, որի պաշարները հաստատվել են << ՊՊՀ-ի կողմից 13.07.2001թ.-ի N 99 արձանագրությամբ որպես բետոնի լցանյութ:

Երկրաբանական ուսումնասիրություններն իրականացվելու են Եղվարդի հանքավայրի Արևմտյան տեղամասի տարածքում հրաբխային խարամների արդյունաբերական պաշարների գնահատման, դրանց ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրության նպատակով:

Եղվարդի հրաբխային խարամների հանքավայրի Արևմտյան տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ-ի պատվերով և միջոցներով՝ նպատակ ունենալով ուսումնասիրել, եզրագծել և հաշվարկել դրանց պաշարները, որպես որպես բազմանպատակային օգտագործման հումք շինարարական աշխատանքների համար: Օգտակար հանածոյի որակը նախատեսվում է



գնահատել Pko ГОСТ 8267-95 <<Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար>> ГОСТ 8736-93 "Песок для строительных работ" պահանջներին համապատասխան:

Համաձայն գործող հրահանգերի, A արդյունաբերական կարգով պաշարների գնահատման համար հետախուզական ցանցի խտությունը պետք է կազմի 100-200մ, B կարգով՝ 200-400մ և C1 կարգով՝ 300-100մ: Հետախուզական փորվածքները կտեղադրվեն լայնակի ուղղությամբ նախատեսված 4 հետախուզագծերի վրա: Հետախուզումը կիրականացվի հորատանցքերով և հետախուզահորերով: Նախատեսվում է հորատել 8 հորատանցք 5-ից 45մ խորությամբ՝ մինչև օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ հատելը: Նախատեսվում է նաև 5 մ խորությամբ 4 հետախուզահորի անցում՝ հրաբխային խարամների հատիկաչափական կազմի ուսումնասիրության համար:

Ապարների ֆիզիկամեխանիկական հատկությունների պարզաբանման համար նախատեսվում է 8 հանուկային նմուշների վերցնում: Հետախուզահորերի նմուշարկումը կիրականացվի ակոսային եղանակով: Ակոսի հատույթը ընդունվում է 25x10 սմ, երկարությունը՝ մինչև 5մ: Օգտակար հանածոյի տեխնոլոգիական փորձարկման համար նախատեսվում է վերցնել մեկ համախառը նմուշ: Կիրականացվի նաև նմուշների քիմիական կազմի ուսումնասիրություն և կտրվի ապարի պետրոգրաֆիական բնութագիրը: Կատարվեն օգտակար հանածոյի ռադիոմետրիական ուսումնասիրություններ, ինչպես նաև կիրականացվի տեղամասի 1:1000 մասշտաբի մարկշեյթերական հանույթ և կկազմվեն համապատասխան քարտեզները:

Երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքների հիման վրա կմշակվեն տեղամասի պաշարների հաշվարկման համար կոնդիցիաների և շահագործման տնտեսական նպատակահարմարության հիմնավորումը:

Ուսումնասիրվող տարածքում գրանիտի ելքի սահմանները ճշտելու նպատակով 9.5 հա տարածքում անհրաժեշտ են 1:1000 մասշտաբի որոնողական երթուղիներ: Երթուղիների միջև հեռավորությունը նախատեսվում է 10մ:

Հրաբխային խարամի ֆիզիկամեխանիկական հատկությունների և քիմիական կազմի ուսումնասիրության նպատակով նախատեսվում է անցնել 4 հետախուզահորեր, որոնք կապակցված կլինեն հետախուզական փորվածքների տեղադիրքի հետ: Աշխատանքները կատարվելու են տրակտորով և ձեռքով հորատասեպային եղանակով, առանց պայթուցիկ նյութերի օգտագործման:

Օգտակար հանածոյի մարմինը ամբողջ հզորությամբ կտրելու և նրա որակական հատկանիշների բնութագրման և ուսումնասիրման համար նախատեսվում է հորատել 8 հորատանցք: Այն կատարվելու է ՈՒԳԲ-2.5A ինքնագնաց հաստոցով 132 մ տրամագծով:

Նախատեսվում է բնական մերկացումների, լեռնային փորվածքների և հորատահանուկի 1:100 մասշտաբի փաստագրում:

Կատարվելու է համախառը նմուշների վերցնում բոլոր մակերեսային լեռնային փորվածքներից, ակոսային և հանուկային նմուշարկում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է կազմել հանքավայրի արդյունաբերական յուրացման նպատակահարմարության մասին տեխնիկատնտեսական հիմնավորում:

Եղվարդի հրաբխային խարամների հանքավայրի Արևմտյան տեղամասի տարածքում կատարվելու է 1:1000 մասշտաբի տոպոհանույթ:

Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Արևմտյան տեղամասի մոտակայքում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան: Տեղամասի տարածքում չեն արձանագրվել ՀՀ կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ, դրանց աճելա- և ապրելավայրեր: Տեղամասի տարածքում չկան անտառային զանգվածներ, անտառներ չկան նաև ազդակիր համայնք հանդիսացող Եղվարդում:

Եղվարդի հրաբխային խարամի հանքավայրի Արևմտյան տեղամասը գտնվում է հուշարձաններից զգալի հեռավորության վրա (ավելի քան 1.5կմ), երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կատարվելու են առանց պայթեցման աշխատանքների, հետևաբար, ծրագրավորվող ուսումնասիրությունը չի կարող բացասաբար անդրադառնալ պատմամշակութային հուշարձանների իրավիճակի վրա:

Հետախուզման նման եղանակը շրջակա միջավայրի վրա բնապահպանական տեսակետից կունենա թույլ ազդեցություն: Հետախուզական աշխատանքները նախատեսվում են իրականացնել հաշվի առնելով ընդերքի և շրջակա միջավայրի պահպանության մասին ՀՀ օրենսդրության պահանջները: Հետախուզական աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված նախատեսվել են հետևյալ միջոցառումները:

- Ուսումնասիրության տարածքում և ավտոճանապարհների վրա մթնոլորտային օդի մաքրության պարբերաբար հսկողություն:

- Փոշեզրկման նպատակով արտադրական գոտիներում (հորատհրապարակներ, ճանապարհներ) ջրման աշխատանքների իրականացում:

- Օգտագործվող ագրեգատները աշխատեցնել սարքին վիճակում՝ վնասակար գազերի գերնորմատիվային արտանետումները բացառելու նպատակով:

Հետախուզության ժամանակ թափոնակույտեր չեն առաջանա և լրացուցիչ տարածքներ չեն զբաղեցվի: Ստորև բերվում է բնապահպանական միջոցառումների ծրագիրը:

Հորատահրապարակների և մոտեցման ճանապարհների կառուցման ժամանակ նախատեսվում է կատարել հողի բերրի շերտի հանում և պահպանում հատուկ առանձնացված վայրում հետագա ռեկուլտիվացիայի համար:

Տրանսպորտային միջոցների աշխատանքի ժամանակ հնարավոր է ծխագազերի և անօրգանական փոշու արտանետումներ, որոնց նվազեցման համար նախատեսվում է իրականացնել մեքենաների տեխնիկական վիճակի նախնական և պարբերական ստուգումներ, շարժիչների աշխատանքի կարգավորում, արտանետման խողովակների վրա զտիչների տեղադրում:

Օգտագործված յուղերից, վառելիքի թափվածքից, հորատման պոլիմերային լուծույթից հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է դրանք կուտակել անջրաթափանց տակառներում: Հողերի աղտոտումը կանխելու նպատակով նախատեսվում է տարեկան երկու անգամ իրականացնել հողերի նմուշառում:

Հետախուզական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատահրապարակների տարածքի ռեկուլտիվացիա:

Նշված աշխատանքների համար շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին կատարվելու են հատկացումներ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

**Եզրահանգումներ.** Ուսումնասիրությունների ընթացքում ազդեցությունները լինելու են ժամանակավոր, տեղային, թույլատրելի նորմերի սահմաններում: Նախատեսված են մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք կնվազեցնեն գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի բաղադրիչների վրա:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը:

### **Փորձաքննական պահանջներ**

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիտորինգի պլաններում:
2. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում առաջացած շինարարի (կենցաղային աղբի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
3. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնություններ և թույլտվություններ:

### **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

<<ՄԼ Մայնինգ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի հրաբխային խարամի արևմտյան տեղամասի տարածքում 2017-2019թթ. ընթացքում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Մասնագետ՝



Ձ. Զուռնայան